

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՐ
ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ
ԳՆՈՒՄ 1
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում չափումների միասնականության ապահովման իրավական հիմքերը, չափումների միասնականության ապահովման բնագավառում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարաբերությունները և ուղղված է չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, տնտեսության զարգացմանը և գիտատեխնիկական առաջընթացին:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

Սույն օրենքում օգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները՝
ազգային էտալոն՝ էտալոն, որը չափագիտության լիազոր մարմնի որոշմամբ ճանաչվել է որպես ելակետային՝ Հայաստանի Հանրապետության տարածքում,

աշխատանքային էտալոն՝ էտալոն, որն օգտագործվում է չափման միջոցների կամ չափիչ համակարգերի կալիբրավորման կամ ստուգաչափման համար,

էտալոն՝ նյութական չափ, չափման միջոց, ստանդարտ նմուշ կամ չափողական համակարգ, որը նախատեսված է համապատասխան անորոշությամբ արժեքի կամ միավորի վերարտադրման, սահմանման, պահպանման և այլ չափման միջոցներին փոխանցման համար,

հետևելիության շղթա՝ չափման միջոցներին էտալոնային միավորների արժեքների փոխանցման շղթա, որում ներկայացված են միավորների արժեքների փոխանցման հերթականությունը և անորոշությունների համեմատությունը,

չափագիտական ապահովում՝ օրենսդրական չափագիտության բնագավառում չափման արդյունքների հավաստիության ապահովման համար կիրառվող անհրաժեշտ գործողությունները, տեխնիկական միջոցները և բոլոր կարգերը,

չափագիտություն՝ գիտություն չափումների և դրանց կիրառման մասին,

չափագիտության լիազոր մարմին՝ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, որը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է չափումների միասնականության ապահովման պետական կառավարում,

չափածորված արտադրանք՝ առանց գնորդի ներկայության փաթեթի մեջ դրված արտադրանք, որի պարունակությունն ունի նախասահմանված արժեք և այն հնարավոր էլ փոխել առանց փաթեթը բացելու կամ զգալի փոփոխությունների ենթարկելու,

չափման միջոց՝ չափում կատարելու համար նախատեսված սարք, որը կարող է կիրառվել առանձին կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ,

չափման միջոցների կալիբրավորում՝ գործողությունների ամբողջություն, որի միջոցով, որոշակի պայմաններում որոշվում է կալիբրավորվող չափման միջոցների չափվող արժեքների բաշխման տիրույթը՝ աշխատանքային էտալոնի կամ էտալոնային չափման միջոցների համեմատությամբ,

չափման միջոցների ստուգաչափում՝ գործողությունների ամբողջություն, որն ապահովում է օբյեկտիվ տվյալներ չափման միջոցի սահմանված պահանջներին բավարարելու վերաբերյալ: Չափման միջոցների ստուգաչափումը լինում է ընտրանքային, առաջնային, կրկնակի, պարտադիր պարբերաբար կատարվող և կամավոր,

չափման միջոցների փորձաքննություն՝ չափման միջոցների ստուգաչափում, որն իրականացվում է դատարանի, դատախազության, պետական արբիտրաժի, սպառողների և նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով,

չափում՝ մեծության արժեքի որոշման համար իրականացվող գործողությունների ամբողջություն,

չափումների միասնականություն՝ չափումների այնպիսի վիճակ, որի արդյունքներն արտահայտված են մեծությունների ընդունված միավորներով, իսկ չափումների սխալանքը հայտնի հավանականությամբ դուրս չի գալիս սահմանված տիրույթից,

ստանդարտ նմուշ՝ չափ, որն օգտագործվում է չափման միջոցների ստուգաչափման, կալիբրավորման, ճշտության գնահատման, ինչպես նաև նյութերի բաղադրության, հատկությունների տեխնիկական բնութագրերը բնորոշող մեծությունների արժեքների որոշման ժամանակ,

տեսակի հաստատման սերտիֆիկատ՝ փաստաթուղթ, որը հավաստում է չափման միջոցի տեսակի հաստատված լինելը,

օրենսդրական չափագիտություն՝ չափագիտության մաս, որը ներառում է գործունեության այն տեսակները, որոնց վրա տարածվում են օրենսդրությամբ սահմանված պահանջներ՝ չափումների, չափման միավորների, չափման միջոցների և չափման մեթոդների վերաբերյալ,

օրենսդրական չափագիտական հսկողություն՝ չափման միջոցների տեսակի հաստատում, չափման միջոցների նախնական և հետագա ստուգաչափում, չափագիտական հսկողություն և փորձաքննություն,

գիտական պահպաններ՝ ազգային էտալոնների պահպանման պատասխանատու անձ:

Հոդված 3. Չափումների միասնականության ապահովման բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետության չափագիտության և չափումների միասնականության ապահովման բնագավառում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ԳԼՈՒԽ 2

ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԿՎՈՐՆԵՐԸ, ԷՏԱԼՈՆՆԵՐԸ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈՂԻԿՎԱՆԵՐԸ ԵՎ ԿԱԼԻԲՐԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 4. Մեծությունների միավորները

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են Չափի և Կշռի միջազգային Գլխավոր Համաժողովի կողմից ընդունված և Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության կողմից երաշխավորված միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի մեծությունների միավորները և չափումների սանդղակները:

2. Սույն հոդվածի առաջին մասով երաշխավորված մեծությունների միավորների հետ համահավասար կարող են կիրառվել մեծությունների արտահամակարգային միավորները՝ հարաբերակցված միջազգային համակարգի միավորների հետ:

3. Հայաստանի Հանրապետությունում կարող են կիրառվել համընդհանուր ընդունված հատուկ միավորներ, որոնք անհրաժեշտ են.

1) միջազգային առևտրի կարիքների համար,

2) օդային և ծովային նավագնացության, առողջապահության, ռազմական նպատակների և անվտանգության համար:

4. Մեծությունների միավորների, չափումների սանդղակների հայերեն անվանումը, նշագրումը, գրելաձևը և կիրառման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Առևտրում, գովազդում, հրատարակություններում, դասագրքերում արգելվում է կիրառել թույլատրված միավորներից տարբեր միավորներ:

Հոդված 5. Էտալոններ

1. Ազգային էտալոնների համակարգը ստեղծվում է կիրառման թույլատրված միավորների պահպանման, տարածման և տնտեսության պահանջարկը բավարարելու նպատակով:

2. Մեծությունների միավորները, ազգային և աշխատանքային էտալոնները չափումների միասնականության ապահովման ազգային համակարգի տեխնիկական հիմքն են: Դրանք Հայաստանի Հանրապետության տարածքում հանդիսանում են ելակետային և նախատեսված են մեծությունների միավորների չափերի վերարտադրման և պահպանման համար, ինչպես նաև տվյալ մեծությունների աշխատանքային չափման միջոցներին դրանց չափի փոխանցման համար:

3. Ազգային էտալոնները պահպանվում են Չափագիտության ազգային մարմնի գիտական պահպանների կողմից:

4. Չափման միջոցը որպես ազգային էտալոն ճանաչվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

5. Ազգային էտալոնները պետության սեփականությունն է:

Հոդված 6. Չափման միջոցները

1. Չափման միջոցները նախատեսված են կիրառման թույլատրված միավորներով արտահայտված մեծությունների արժեքը որոշելու համար:

2. Չափման միջոցների չափագիտական բնութագրերը, ինչպես նաև տվյալ չափման միջոցներին ներկայացվող շահագործման պահանջները սահմանվում են տվյալ չափման միջոցն արտադրողի կողմից:

3. Օրենսդրական չափագիտության ենթակա ոլորտներում կիրառվող չափման միջոցները պետք է համապատասխանեն օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Հոդված 7. Ստանդարտ նմուշներ

1. Օրենսդրական չափագիտության ոլորտներում կիրառվող ստանդարտ նմուշները ենթակա են տեսակի հաստատման:

2. Կալիբրավորման ժամանակ կիրառվող ստանդարտ նմուշները ենթակա են վկայագրման՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

Հոդված 8. Չափումների կատարման մեթոդիկաները

1. Չափումների կատարման մեթոդիկան փաստաթուղթ է, որով սահմանվում են չափումների կատարման նախապատրաստման կանոնները, չափման մեթոդը, տեխնիկական միջոցները, ինչպես նաև չափման արդյունքի մշակման և հաշվարկման կարգը:

2. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաները ենթակա են չափագիտական վկայագրման:

Հոդված 9. Չափման միջոցների կալիբրավորումը

1. Կալիբրավորումն իրականացվում է էտալոնի համեմատությամբ կալիբրավորվող չափման միջոցների չափվող արժեքների բաշխման տիրույթը որոշելու նպատակով:

2. Օրենսդրական չափագիտության ոլորտներում չկիրառվող չափման միջոցները կարող են ենթարկվել կալիբրավորման:

3. Չափման միջոցների կալիբրավորում կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հավատարմագրված իրավաբանական անձիք կամ անհատ ձեռնարկատերերը:

Հոդված 10. Չափումների միասնականության ապահովման պետական

կառավարումը

1. Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական չափագիտության ոլորտներում չափումների միասնականության ապահովման պետական կառավարումն իրականացնում է չափագիտության լիազոր մարմինը:

2. Չափագիտության լիազոր մարմինը՝

1) մշակում և համակարգում է պետական քաղաքականության իրականացումն օրենսդրական չափագիտության ոլորտներում,

2) համակարգում է Չափագիտության ազգային մարմնի գործունեությունը,

3) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպություններում,

4) սահմանում է չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատի ձևը, չափման միջոցի տեսակի հաստատման նշանի պատկերը,

5) սահմանում է չափման միջոցի տեսակի հաստատման գրանցամատյանի վարման կարգը,

6) սահմանում է չափման միջոցի ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերը,

7) իրականացնում է վարչական վարույթ օրենսդրական չափագիտության ոլորտում,

8) օրենսդրական չափագիտության ոլորտում իրականացնում է պետական վերահսկողություն,

9) ընդունում և գործողության մեջ է դնում Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության և Չափի և Կշռի միջազգային համաժողովի ուղեցույցները:

Հոդված 11. Չափագիտության ազգային մարմինը

1. Չափագիտության ազգային մարմինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Չափագիտության ազգային մարմինն իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում, չափագիտության բնագավառում իրականացնում է պետական քաղաքականություն:

2. Չափագիտության ազգային մարմինը՝

1) ստեղծում, պահպանում, կատարելագործում է մեծությունների միավորների ազգային էտալոնները,

2) ապահովում է ազգային էտալոնների կալիբրավորում այլ երկրների չափագիտության ազգային ինստիտուտների էտալոնների հետ,

3) իր իրավասության սահմաններում անդամակցում է միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին,

4) սահմանում է ստանդարտ նմուշների վկայագրման կարգը և իրականացնում է ստանդարտ նմուշների վկայագրում,

5) չափաժրարված արտադրանք և չափիչ սրվակներ արտադրող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրում է պայմանանշաններ,

6) իրականացնում է շահագործման մեջ գտնվող չափման միջոցների չափագիտական բնութագրերի փորձաքննություն,

7) իրականացնում է կալիբրավորման աշխատանքներ՝ հետևելիությունն ապահովելու նպատակով,

8) իրականացնում է օրենսդրական չափագիտության ոլորտում չափումների կատարման մեթոդիկաների չափագիտական վկայագրում,

9) իրականացնում է չափաժրարված արտադրանքի հսկողություն, չափագիտական ապահովման վերլուծության և չափումների պահանջվող ճշտության ապահովման միջոցով,

10) հաստատում է չափման միջոցների տեսակը,

11) վարում է հաստատված չափման միջոցների և ստանդարտ նմուշների գրամցամատյանը,

12) մասնակցում է չափման միջոցների կալիբրավորում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հավատարմագրման աշխատանքներին,

13) իրականացնում է չափման միջոցների ստուգաչափում,

14) կազմակերպում է չափագիտության բնագավառում կադրերի մասնագիտացում, վերապատրաստում, օրենսդրական չափագիտության ոլորտում մասնագետների ուսուցում՝ որպես ստուգաչափող, ինչպես նաև կալիբրավորման և փորձարկման լաբորատորիաների անձնակազմի վերապատրաստում և հավատարմագրման փորձագետների ուսուցում և շնորհում է համապատասխան վկայագրեր:

Հոդված 12. Կառավարման խորհուրդը

1. Կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Չափագիտության ազգային մարմնի կառավարման մարմինն է, որը կազմված է 7 անդամներից՝ չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 4 պետական կառավարման մարմինների և 3 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

2. Խորհրդի անհատական կազմը սահմանում է լիազորված պետական կառավարման մարմինը:

3. Չափագիտության ազգային մարմնի տնօրենը հանդիսանում է Խորհրդի քարտուղարը և չի կարող հանդես գալ որպես Խորհրդի նախագահ:

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա են քվեարկության ծայնի իրավունք ունեցող Խորհրդի անդամների առնվազն 2/3 անդամ:

5. Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

6. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ:

7. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա գտնվող անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Խորհուրդը՝

1) ընդունում է որոշումներ Չափագիտության ազգային մարմնի գործունեության պլանավորման և գործունեության հետ կապված խնդիրների կանոնակարգման վերաբերյալ,

2) հաստատում է Չափագիտության ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը,

3) դիմում է շահագրգիռ կողմերին՝ տարբեր հարցերի շուրջ կարծիք արտահայտելու խնդրանքով,

4) քննարկում է Չափագիտության ազգային մարմնի հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ներկայացնում է առաջարկություն՝ այն լիազոր պետական կառավարման մարմնի հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ,

5) քննարկում, հաստատում և հրապարակում է Չափագիտության ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքները,

6) ապահովում է չափագիտության ազգային համակարգի համապատասխանությունն ազգային տնտեսության շահերին, նյութատեխնիկական բազայի ներկա վիճակին և գիտատեխնիկական առաջընթացին,

7) համակարգում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային և տարածաշրջանային չափագիտական աշխատանքները՝ այդ աշխատանքների կատարմանն ընդգրկելով շահագրգիռ կողմերին և համապատասխան փորձագետներին,

8) իրականացնում է Չափագիտության ազգային մարմնի կանոնադրությամբ Խորհրդին վերապահված այլ լիազորություններ:

Գ Լ ՈՒ Մ 4

ՕՐԵՆՆՊՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդված 13. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտները

1. Օրենսդրական չափագիտության պահանջները տարածվում են այն չափումների վրա, որոնց արդյունքներն օգտագործվում են՝

1) գնորդի և վաճառողի միջև առևտրային գործողություններում, արտադրողի և իրացնողի միջև հաշվարկներում,

2) առողջապահության բնագավառում,

3) շրջակա միջավայրի պահպանության, աշխատանքային վայրում անվտանգության և պատահարների կանխման ժամանակ,

4) ճանապարհային երթևեկության վերահսկման և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը գնահատելու ժամանակ,

5) պետական կառավարման մարմինների, արբիտրաժային դատարանի, դատախազության, դատական մարմինների հանձնարարությամբ կիրառվող չափումների ժամանակ,

6) համապատասխանության գնահատման նշանակված մարմիններում:

2. Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 14. Օրենսդրական չափագիտության գործառնությունները

1. Օրենսդրական չափագիտության գործառնություններն են՝

- 1) չափման միջոցների տեսակի հաստատում,
- 2) չափման միջոցների ստուգաչափում,
- 3) չափագիտական հսկողություն,
- 4) չափագիտական փորձաքննություն:

Հոդված 15. Չափման միջոցների փորձարկում և տեսակի հաստատում

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրված և ներմուծված չափման միջոցները, որոնք կիրառվում են օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում, ենթակա են տեսակի հաստատման:

2. Չափման միջոցի տեսակի հաստատված լինելը հավաստվում է չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատով, որի ձևը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը:

3. Չափման միջոցի տեսակի հաստատումն իրականացնում է Չափագիտության ազգային մարմինը՝ փորձարկումների արդյունքների հիման վրա:

4. Չափման միջոցների փորձարկումներն իրականացվում են դրանց չափագիտական բնութագրերի հետազոտման, ստուգաչափման մեթոդի և միջստուգաչափական ժամանակամիջոցի որոշման նպատակով:

5. Չափման միջոցների փորձարկումների և տեսակի հաստատման կարգը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության սահմանած ուղեցույցերով:

Հոդված 16. Չափման միջոցների ստուգաչափում

1. Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցները ենթակա են ստուգաչափման:

2. Չափման միջոց արտադրող, նորոգող և կիրառող իրավաբանական անձինք ու անհատ ձեռնարկատերերը պարտավոր են չափման միջոցը ներկայացնել ստուգաչափման:

3. Չափման միջոցի ստուգաչափման պարբերականությունը սահմանվում է չափման միջոցի տեսակի հաստատման ժամանակ:

4. Չափման միջոցների ստուգաչափում իրականացնող մասնագետները ենթակա են վկայագրման՝ որպես ստուգաչափող:

5. Չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացվում են ստուգաչափման դրոշմի արտատիպով չափման միջոցի վրա և (կամ) անձնագրի վրա և (կամ) տրվում է ստուգաչափման վկայական:

6. Ստուգաչափման բացասական արդյունքների դեպքում ստուգաչափողը մարում է ստուգաչափման դրոշմի արտատիպը և տալիս է ծանուցագիր՝ չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու մասին:

7. Չափման միջոցների ստուգաչափման կազմակերպման և իրականացման կարգը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության ուղեցույցների հիման վրա:

8 Չափագիտության ազգային մարմինը չափման միջոցները սահմանված կարգով ստուգաչափման ներկայացնելու համար՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տալիս է ստուգաչափման ներկայացնելու ծանուցում:

9. Ստուգաչափման դրոշմը համարվում է անվավեր, եթե այն վնասված է:

10. Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չստուգաչափված չափման միջոցների շահագործումն արգելվում է:

11. Համապատասխան էտալոններ և մասնագիտացում ունեցող կադրերի, ինչպես նաև աշխատանքային անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում իրավաբանական անձին ստուգաչափման իրավունք տալիս է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ չափագիտության լիազոր մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 17. Չափման միջոցների, ինչպես նաև չափածրարված արտադրանքի և չափիչ սրվակների չափագիտական հսկողությունը

1. Չափման միջոցների չափագիտական հսկողությունն իրականացվում է չափագիտական ապահովման վերլուծության և վերլուծության արդյունքը Չափագիտության ազգային մարմնում գրանցելու միջոցով:

2. Չափածրարված արտադրանքը և չափիչ սրվակները պետք է մակնշված լինեն չափագիտական նորմերով սահմանված պայմանանշաններով:

3. Չափածրարված արտադրանքի և չափիչ սրվակների չափագիտական նորմերը, պայմանանշանները և դրանց տրամադրման կարգը, ինչպես նաև չափածրարում իրականացնելու համար և չափածրարման հսկողության համար կիրառվող սարքավորումներին ներկայացվող չափագիտական պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Արգելվում է առանց պայմանանշանի չափածրարված արտադրանքի իրացումը և առանց համապատասխան պայմանանշանի՝ չափիչ սրվակների կիրառումը:

5. Չափագիտական ապահովման վերլուծությունը և չափածրարված արտադրանքի ու չափիչ սրվակների չափագիտական հսկողությունն իրականացնում է Չափագիտության ազգային մարմինը:

Հողված 18. Ներմուծված չափման միջոցների և չափածորարված արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը

Մաքսային մարմինները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված չափման միջոցների և չափածորարված արտադրանքի վերաբերյալ տեղեկատվություն են տրամադրում չափագիտության լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հողված 19. Չափման միջոցների փորձաքննություն

1. Չափման միջոցների փորձաքննությունն իրականացվում է դատարանի, դատախազության, պետական արբիտրաժի, սպառողների և նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով՝ չափման միջոցների չափագիտական բնութագրերը որոշելու նպատակով:

2. Չափման միջոցների փորձաքննությունն իրականացնում են Չափագիտության ազգային մարմինը և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրավասություն ձեռք բերած ստուգաչափում իրականացնող լիազորված կազմակերպությունները:

ԳԼՈՒԽ 5.

ՊԵՏԱԿԱՆ ԶԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՈՂՎԱԾ 20. ԶԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Չափագիտական վերահսկողության նպատակն է չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված չափագիտական կանոնների և նորմերի խախտումների բացահայտումը և դրանց կանխարգելումը:

2. Չափագիտական վերահսկողությունը տարածվում է սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված օրենսդրական չափագիտական ոլորտների վրա:

3. Չափագիտական վերահսկողության խնդիրներն են՝

1) հաստատված տեսակին չափման միջոցների կիրառումը.

2) չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների առկայությունը.

3) չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումը:

ՀՈՂՎԱԾ 21. ԶԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍԱՐՄԻՆԸ

1. Չափագիտական վերահսկողությունն իրականացնում է չափագիտության լիազոր մարմինը՝ իր կազմում գործող համապատասխան տեսչության (այսուհետ՝ տեսչություն) միջոցով:

2. Տեսչության կողմից արձակվող կարգադրագրերի ձևերը հաստատում է չափագիտության լիազոր մարմինը:

ՀՈՂՎԱԾ 22. ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պետական տեսուչը՝

1) կարգադրագրով արգելում է չափման միջոցների չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող խմբաքանակի իրացումը,

2) չափագիտական կանոններին ու նորմերին ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցների համապատասխանության ստուգման նպատակով հրավիրում է չափագիտության ազգային մարմնի ներկայացուցիչ,

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

ՀՈՂՎԱԾ 23. ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Պետական տեսուչը իր պարտականությունները չկատարելու, անպատշաճ կատարելու, իրենց լիազորությունները վերազանցելու, պետական և (կամ) ծառայողական գաղտնիքները հրապարակելու դեպքում պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

2. Պետական տեսուչի անօրինական գործողությունների հետևանքով տնտեսավարող սուբյեկտներին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

3. Պետական տեսուչի գործողությունները կարող են բողոքարկվել լիազոր մարմնին կամ դատարան:

4. Պետական տեսուչի արձակած կարգադրագրերի բողոքարկումը չի կասեցնում դրանց կատարումը:

ՀՈՂՎԱԾ 24. ԶԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ԽԱՆՏԱՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՂՐԱԳՐԵՐԸ

1. Կարգադրագիրը պետական տեսուչի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգման արդյունքներով կազմված ակտի հիման վրա իր իրավասության սահմաններում ընդունված իրավական ակտ է, որն ուղղված է՝

1) տեսակը չհաստատված կամ հաստատված տեսակին կամ չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող չափման միջոցների իրացման արգելմանը՝ մինչև հայտնաբերված խախտումների վերացումը,

2) չափման միջոցների շահագործման արգելմանը, եթե դրանք չեն անցել ստուգաչափում կամ չափագիտական վկայագրում, կամ դրանց տեսակը հաստատված չէ, կամ դրանք չեն համապատասխանում հաստատված տեսակներին,

3) չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող չափման միջոցների խմբաքանակի իրացման արգելմանը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգադրագրերով սահմանվում է հայտնաբերված խախտումների վերացման ժամկետ՝ համաձայնեցված տնտեսավարող սուբյեկտի հետ:

3. Տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է կարգադրագրով սահմանված ժամկետում կարգադրագրի կատարման մասին տեղյակ պահել տեսչությանը:

4. Կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում տեսչությանը գրավոր չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

5. Կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացնում է տեսչության ղեկավարը՝ տնտեսավարող սուբյեկտի դիմումով կարգադրագրերի կատարման ստուգման դրական արդյունքների հիման վրա:

ԳԼՈՒԽ 6

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 25. Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

1. Սույն օրենքի դրույթները խախտող անձինք կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7

ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 26. Չափումների միասնականության ապահովման աշխատանքների ֆինանսավորումը

1. Պարտադիր պետական ֆինանսավորման ենթակա են՝

1) ազգային էտալոնների ստեղծումը (ծեռքբերումը), կատարելագործումը, պահպանումը, սպասարկումը,

2) մեծությունների միավորների ազգային էտալոնների բաղադրումը միջպետական կամ միջազգային էտալոնների հետ,

3) հիմնարար և կիրառական կարևոր հետազոտական աշխատանքների կատարումը չափագիտության բնագավառում,

4) չափումների միասնականության ապահովման հարցերով նորմատիվ իրավական ակտերի մշակումը,

5) Չափագիտության ազգային մարմնի վերազինման համար սարքավորումների մշակումը, ծեռքբերումը և պահպանումը,

6) չափագիտության միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին անդամավճարները:

7) չափագիտության բնագավառի պետական գիտատեխնիկական ծրագրերի կատարման հետ կապված աշխատանքները:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին որպես դրամաշնորհ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն հոդվածի աշխատանքների ֆինանսավորումը կարող է իրականացվել նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Հոդված 27. Չափագիտական աշխատանքների և մատուցված ծառայությունների համար վճարումը

1. Չափագիտության ազգային մարմնի կողմից իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին մատուցված ծառայությունների համար վճարումը կատարվում է պայմանագրային հիմունքներով:

2. Չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ 1000-ից 50000 դրամի սահմաններում՝ լիազորված մարմնի կողմից սահմանված գներին համապատասխան:

3. Պատվիրատու հանդես եկող տնտեսվարող սուբյեկտը փոխհատուցում է չափագիտական աշխատանքներ կատարողին չափագիտական աշխատանքների հետ կապված աշխատակիցների գործուղման, ստուգաչափման միջոցների՝ մինչև աշխատանքների կատարման վայրը փոխադրման ծախսերը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 28. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից, բացառությամբ 26-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մայիսի 26-ի ՀՕ-83-Ն օրենքը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հավատարմագրման մասին», «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ եզրակացությունը
1	2	3	4	5
1.	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ մաս և 28-րդ հոդված</p> <p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի 23-րդ հոդված</p> <p>«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մաս:</p>	<p>1. «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ մասում և 28-րդ հոդվածում «օրենսդրությանը» և «օրենսդրությամբ» բառերը համապատասխանաբար անհրաժեշտ է փոխարինել «օրենքին» և «օրենքով» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:</p> <p>Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 23-րդ հոդվածին:</p> <p>2. «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել «Չափագիտության ազգային մարմնի գիտական պահապաններ» հասկացությունը, մասնավորապես պարզ չէ, թե ովքեր են հանդիսանում հիշյալ ինստիտուտի գիտական պահապանները և ինչ կարգով պետք է պահպանվեն ազգային էտալոնները: Բացի այդ</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Նախագծի 2-րդ հոդվածում տրվել է «գիտական պահապաններ» հասկացությունը:</p>

			անհրաժեշտ է հստակեցնել «գիտական պահպաններ» հասկացության իրավական բովանդակությունը:	
2.	<p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի</p> <ul style="list-style-type: none"> 9-րդ հոդված, 8-րդ մաս, 1-ին կետ <ul style="list-style-type: none"> 12-րդ հոդված <ul style="list-style-type: none"> 17-րդ հոդված <ul style="list-style-type: none"> 8-րդ գլուխ 24-րդ հոդված 	<p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի.</p> <ul style="list-style-type: none"> 9-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում «հիման վրա» բառերից հետո լրացնել «հավատարմագրման ազգային մարմնի ղեկավարի ներկայացմամբ» բառերը. <ul style="list-style-type: none"> 12-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «3. Համապատասխանության գնահատման մարմինները համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման հայտերը ընդունում են էլեկտրոնային համակարգի միջոցով:», <p>17-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով:</p> <p>8-րդ գլխում «ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ» բառերը հանել:</p> <p>24-րդ հոդվածը հանել, եվ փոխել հաջորդ հոդվածի համարակալումը՝ ըստ</p>	<p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի.</p> <ul style="list-style-type: none"> 9-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում «հիման վրա» բառերից հետո լրացնել «հավատարմագրման ազգային մարմնի ղեկավարի ներկայացմամբ» բառերը. <ul style="list-style-type: none"> 12-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «3. Համապատասխանության գնահատման մարմինները համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման հայտերը ընդունում են էլեկտրոնային համակարգի միջոցով:», <p>17-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով:</p> <p>8-րդ գլխում «ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ» բառերը հանել:</p> <p>24-րդ հոդվածը հանել, եվ փոխել հաջորդ հոդվածի համարակալումը՝ ըստ</p>	<p>Փոփոխությունը պայմանավորված է հավատարմագրման գործընթացի կազմակերպման անհրաժեշտությունից:</p> <p>Նշված փոփոխությունը պայմանավորված է 2011թ. դեկտեմբերի 22-ի ՀՀ կառավարության նիստում ընդունված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հավելվածի 2.1 կետի պայանջներին նախագծի համապատասխանեցմամբ:</p> <p>Փոփոխությամբ վերացվում է հակասությունը նախագծի 9-րդ հոդվածի 8-րդ մասի 8-րդ կետի և 17-րդ հոդվածի 1-ին մասի միջև:</p> <p>Փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է հավատարմագրման բնականոն գործընթացին խոչընդոտող գործոնի</p>

		<p>«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծի.</p> <ul style="list-style-type: none"> • 8-րդ հոդվածի 4-րդ կետ • 9-րդ հոդվածի 7-րդ կետ • 9-րդ հոդվածի 8-րդ կետ 	<p>հերթականության:</p> <ul style="list-style-type: none"> • 8-րդ հոդվածի 4-րդ կետից հետո ավելացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ. «5) սահմանում է համապատասխանության գնահատման ընթացակարգերը,» • 9-րդ հոդվածի 7-րդ կետում «որոշում է ընդունում նշանակումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ» բառերի փոխարինել «որոշում է ընդունում նշանակումը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ» բառերը, • 9-րդ հոդվածի 8-րդ կետից հանել «և հաստատում գրանցամատյանի վարման կարգը» բառերը, • 9-րդ հոդվածի 10-րդ կետում «համապատասխանության գնահատման 	<p>վերացմամբ, այսինքն՝ բացակայում է հավատարմագրման գործընթացը մինչև սույն թվականի հուլիսի 1-ը հետաձգելու անհրաժեշտությունը:</p> <p>Բոլոր փոփոխությունները կատարվել են համապատասխան N768/2008 և N765/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջների:</p> <p>Համապատասխանության գնահատման ընթացակարգի սահմանումը ՀՀ կառավարության կողմից անհրաժեշտ է համապատասխանության գնահատման գործընթացի ճիշտ կազմակերպման համար, ինչպես նաև այն բխում է N768/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջներից:</p> <p>N768/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջ:</p> <p>Նման ընթացակարգ սահմանված չէ ոչ N768/2008 և ոչ էլ N765/2008 Եվրոպական կանոնակարգերի:</p>
--	--	--	--	--

	<ul style="list-style-type: none"> • 9-րդ հոդվածի 10-րդ կետ • 9-րդ հոդվածի 11-րդ կետ • 20-րդ հոդված 	<p>նշանակված մարմինների բողոքարկման հանձնաժողովների» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հանձնաժողովի անհատական կազմը,» բառերով</p> <ul style="list-style-type: none"> • 9-րդ հոդվածի 11-րդ կետում «և» բառից հետո գրել «նշանակված մարմինների կողմից տրվող», <p>20-րդ հոդվածի</p> <ul style="list-style-type: none"> • 1-ին մասից հանել «, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ» բառերը: • 2-րդ մասում «կարգով» բառը փոխարինել «ընթացակարգով» բառով: • 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <p>«3. Համապատասխանության գնահատման մարմինը նշանակման համար համակարգող մարմնին ներկայացնում է հայտ, որին կցվում են համապատասխանության գնահատման գործունեության նկարագիրը, համապատասխանության գնահատման մեկ կամ մի քանի ընթացակարգերի անվանումները և մեկ կամ մի քանի արտադրանքի անվանումները, որոնց նկատմամբ համապատասխանության գնահատման մարմինը հայտարարում է իր տեխնիկական իրավասությունը, ինչպես նաև հավատարմագրման ազգային մարմնի կողմից</p>	<p>Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ:</p> <p>Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների կողմից ներկայացվող համապատասխանության սերտիֆիկատի ձևը պետք է տարբերվի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներկայացվող համապատասխանության սերտիֆիկատի ձևից, որը հաստատվում է հավատարմագրման ազգային մարմնի կողմից:</p> <ul style="list-style-type: none"> • N768/2008 Եվրոպական կանոնակարգի նախաբանի 41-րդ կետն է:
--	--	---	--

		<ul style="list-style-type: none"> • 23-րդ հոդված, 2-րդ մաս • 23-րդ հոդված, 4-րդ մաս • 25-րդ հոդվածի 3-րդ մաս 	<p>տրված հավատարմագրման վկայագիր:»:</p> <ul style="list-style-type: none"> • 5-րդ մասը հանել և փոխել համարակալումը՝ ըստ հաջորդականության: • 7-րդ (նախկին 8-րդ) մասում «որակի և տեխնիկական կանոնակարգման ազգային խորհուրդ» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հանձնաժողով» բառերով: • 8-րդ (նախկին 9-րդ) մասում «Որակի և տեխնիկական կանոնակարգման ազգային խորհրդի առաջարկի կամ Հավատարմագրման տեխնիկական կոմիտեների ուսումնասիրության արդյունքի հիման վրա» բառերը փոխարինել «Օրենքին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընթացակարգերին չհամապատասխանելու դեպքում» բառերով: • 23-րդ հոդվածի 2-րդ մասում «համակարգող մարմնի» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման» բառերով: • 23-րդ հոդվածի 4-րդ մասում «Բողոքարկման հանձնաժողովների» բառերը փոխարինել «Համապատասխանության գնահատման նշանակված մարմնի համապատասխանության գնահատման բողոքարկման հանձնաժողովի» բառերով: • 25-րդ հոդվածի 3-րդ մասում «կիրառելիս» բառը փոխարինել «տրամադրելիս» բառով, • 25-րդ հոդվածում 3-րդ մասից հետո լրացնել նոր մաս հետևալ բովանդակությամբ. «4. Հայաստանի Հանրապետությունում համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանը կարող է կիրառել միայն արտադրողը կամ 	<p>Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ:</p> <p>Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ:</p> <p>N765/2008 Եվրոպական կանոնակարգի 30-րդ հոդվածն է:</p>
--	--	--	--	---

		<ul style="list-style-type: none"> • 29-րդ հոդվածի 1-ին մաս 	<p>Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը:»:</p> <p>29-րդ հոդվածի 1-ին մասում «կամ մասնակցությունը դրանց մշակմանը» բառերը հանել:</p>	<p>N765/2008 Եվրոպական կանոնակարգի 30-րդ հոդվածն է:</p> <p>N765/2008 Եվրոպական կանոնակարգի 34, 35-րդ հոդվածներն են:</p>
3.	ՀՀ կառավարություն	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդված, 4-րդ մաս	11-րդ հոդվածի 4-րդ մասում «2/3 անդամ» բառերը փոխարինել «2/3-ը» բառերով:	Փոփոխությունը պայմանավորված է վրիպակը շտկելու անհրաժեշտություինից:
4.	ՀՀ կառավարություն	«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ 29-րդ հոդված, 1-ին մաս	Օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասում «21-րդ» բառը փոխարինել «26-րդ» բառով:	Նշված փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է վրիպակը շտկելու նկատառումներից: